№ 212 Նոյեմբերի 13 (25) 1881 Նոյեմբերի 13 (25) № 212

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք պիտում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Հին-Նախիջեւանից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Հայոց խնդիր։ Միացեալ ընկերութիւն։ Ազգային ժողով։ Իտալիա։ Եգիպտոս։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։— ՖԵԼԻԵՏՕՆ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Նոյեմբերի 3-ին

Կարդում եմ «Մշակի» և «Մեղուի» այն յօդուածները, որոնք վերաբերվում են Գէորգեան ճեմարանի վարժապետներին տուած ռոճիկներին։

«Մշակը» համարում է այդ անգին ռոճիկները անբարոյականացնող։ Դորան հակառակ «Մեղու» համարում է բարոյականացուցիչ և շնորհաւորում է.... Քեզ ինչ, մտածում եմ ինքս ինձ. միթէ ամեն բան ճշմարիտ է և անկեղծ է, ինչ որ գրվում և խօսվում է....

Իսկ խեղճ ծխական ուսուցիչը իր ապրուստը հազիւ հազ կարողանում է պահպանել, ստանալով տարեկան 100 ռուբլուց մինչև 500 ռուբլ և այն էլ ինչ չարչարանքով, ինչ թուք ու մուրով է ստանում այդ ռոճիկը։ Խեղճը միայնակ, երկար ժամերով ցրտի, փոշու, խոնաւութեան և շատ անգամ անյիշելի նեղութիւնների ենթարկված, տանում է իր լուծը. Նրա մասին ոչ ոք չէ մտածում։

Այո, ողորմելի ծխական ուսուցչին չեն շնորհաւորի, Նրան չեն ասի թէ աւելի բարոյականացնող կը լիներ, եթէ նա կարողանար մարդավարի կեանք ունենալ. ընդհակառակն, Նրան միշտ կասեն որ դպրոցի նիւթական միջոցը չէ ներում աւելի տալ, «համբերիր, ազգային գործ է, պէտք է նեղութիւնները տարած, մինչև որ դրութիւնը փոխվի, լաւանայ....»

Զը գիտեմ անտեսութեան, ազգային անտեսութեան ո՞ր կէտիցն են նայում պ. պ. շնորհաւորողները։ մի քանիսներ սովամահ են լինում, մի երկուսին առատ ռոճիկներ տալու համար։

Ամեն թղթակցութիւններից երևում է որ ծխական դպրոցներից շատերը արդէն ընկնում են, փակվում են, ուսուցիչները փախչում են, եղած չեղած գումարները կորչում են, հոգաբարձուները և երեցփոխանները խարդախութիւններ են անում։ Այս ամենը ոչինչ։ Բայց որ մի Նահապետեան 6,000 ռուբլ ռոճիկ է ստանում,— պէտք է ոտն կատարել։

Շատ լաւ, ապագայ սեպտեմբերին կը կատարենք այդ տօնը։ Իսկ այժմ խնդրում ենք ուսուցանել մեզ թէ ինչ անենք, երբ մի կողմից զօրեղ կարիքը, իսկ միւս կողմից անսիրտ և անհոգ ժողովրդի և հոգաբարձուների վարձկաններ ենք։

Ներեցէք որ պատմեմ մի դէպք և դա թող համարվի շնորհաւորութիւնների արձագանք։ Մի բարեկամ ծխական, գիւղական դպրոցի ուսուցիչ է, ստանում է 150 ռուբլ տարեկան ռոճիկ և ապրում է ընտանիքով։ Կասեն, ի հարկէ, որ հայ ուսուցչի համար ընտանիք ունենալը պէտք չէ։ Ինչ և իցէ, խեղճը այդ ռոճիկով ապրում էր, յանկարծ գողերը յափշտակեցին Նրա ունեցածը, մի և նոյն ժամանակ Նրա մանուկը ծանր կերպով տկարացաւ տարափոխիկ ախտով, որ տիրում էր այդ ժամանակ գաւառում։ Մանուկը վախճանվեց։ Խեղճ հայրը իր տարեկան ռոճկի երկու երրորդը արդէն վատնել էր բժշկի և դեղերի վրա, վերջը նա մի այլ տեղում իր մի քանի ծախած իրերից փոխարինաբար պէտք է ստանար 40 ռուբլ մի մահտեսի վաճառականից, որի գործակատարը գիւղումն էր։ Երկու երեք շաբաթ է անցնում. մահտեսու գործակատարը պահում է թէ փողը և թէ նամակները, նոյն իսկ դեղերը, որոնք մեռնող մանուկի համար էին ուղարկված. գործակատարը հաւատացնում էր որ հաշիւ է ունեցել ուսուցչի ազգականների հետ։ Խեղճ բարեկամս ստիպված էր առանց բժշկի, առանց փողի և դեղերի վերադառնալ իր հիւանդ ընտանիքի մօտ։ Ցայտնի բան է որ նա մեծ մխիթարութիւն զգաց կարդալով լրագիրներում որ հայ ուսուցիչներից ոմանք ստանում են չորսից մինչև վեց հազար ռուբլ ռոճիկ, որ ճեմարանը կլանում է մանր գաւառական դպրոցների եկամուտները, որ վերջապէս լուս. ու մունջ փակվեցան տեղիս երկսեռ դպրոցները, որոնք դաւառումս առաջ մինչև 15 թուով էին, իսկ այժմ հազիւ երկուսն են մնացել դեռ ևս։

Դրանով էլ անշուշտ մխիթարված կը լինի խեղճը որ նախիջևանցին մի քայլ առաջ անելուց յետոյ, երկուսը յետ է անում։

Ուսուցիչ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 8 Նոյեմբերի

Ինչպէս անցեալ տարի, նոյնպէս և այս տարի կրկնվում է այն հարցը՝ թէ հարկաւոր է Թիֆլիսում ունենալ մի բարեգործական ընկերութիւն, որ նպաստեր ուսում առնող չքաւոր երիտասարդներին. բայց մինչև այժմ մնացել է «ձայն բարբառոյ յանապատի»։ Բայց միթէ մեր հարուստները չեն մտածում ձեռնամուխ լինելու այդպիսի մի ազգօգուտ գործին, որի օգուտները վաղուց իրանց յայտնի են, որ իրանց պատիւ կը բերէր. միթէ պէտք է մտածեն միայն իրանց որդւոց դաստիարակութեան վրա. ապա ինչ պէտք է անեն այն հարիւրաւոր խեղճ երիտասարդները, որոնք գալիս են զանազան գաւառներից, գոնէ տարրական կրթութիւն ստանալու, որ իրանց խեղճ ազգը գոնէ իրանց միջնորդութեամբ այբ—բենին արժանանայ. միթէ հարուստի որդին աւարտելով իր ուսումը յանձն կառնի (բացառութիւն շատ քիչ) մի որ և իցէ գաւառական քաղաքում կամ գիւղում դաս տալ։ Ոչ, և հազար անգամ ոչ. հարուստի որդին աւարտելով իր ուսումը իսկոյն դիմում է կամ համալսարան բարձր գիտութիւն ստանալու (շատ քիչ) և կամ թագաւորական ծառայութիւն։ Ապա ուստի է մընում այդ ծանր պաշտօնը կատարելու. կրկին Ներսիսեան դպրոցի խեղճ քաղցած սնված երիտասարդներին, որոնք անցուցանում են 7 տարին թշուառութեան և տանջանաց մէջ, շատը մինչև անգամ չունենալով կարողութիւն գնելու գրքեր և շորեր։ Դիմում է ուսումնարանի կառավարութեանը, բայց ի՞նչ անէ մի Ներսիսեան դպրոց. 400 աշակերտներին, իր կարողածին չափ կարողանում է օգնել։ բայց մէկին օգնելով, միթէ դրանով ապահովում է և միւսի կեանքը։ Ոչ, սիրելի ընթերցողք, նա անցուցանում է իր կեանքը դառնութեան մէջ. կան այնպիսիներ, որոնք միայն թոշակով են (7 ր.) բաւականանում, իսկ կան և այնպիսիները, որոնք դրանից քիչով, ուրեմն ձեզ եմ թողնում դուք դատեցէք, սիրելի ընթերցողք, թէ՝ ինչ պէտք է լինի այսպիսի աշակերտի դրութիւնը, ինչ ֆիզիկական ոյժ պէտք է մնացած լինի նրա մէջ, որ կարողանայ իր դասերը պատրաստել. ինչպէս կարող է նա այդ անել, քանի որ նա քաղցած է, քանի որ մարմինը պահանջում է կանոնաւոր սնունդ։ Ուրեմն ինչու՞ վրա նա հոգայ՝ իր դասերի, թէ կենսական պիտոյքների։ Պատահում է մինչև անգամ, որ ամբողջ ամիսներ ցամաք հացով է կերակրվում խեղճը, բացի սենեակի խոնաւութեան և ձմեռվան ցրտից և շատ անգամ չը կարողանալով տանել այդպիսի խիստ կեանք, կընքում է իր կեանքը ուսումնական շրջանում և թողնում է իր ծնողաց դառնութեան յիշատակ։ Ահա այս է պատճառը, որ ամենայն տարի հարիւրաւոր աշակերտներ թողնում են ուսումը և իրանց թերի ուսումով դուրս են գալի աս պարէզ, մտնում են հասարակական կեանք առանց ծանօթ լինելու նրա ամեն մի դիպուածին։ Ահա այս տարում վիճակի մէջ է Թիֆլիսի ուսանողութեան վիճակը, որը առօրեայ հարց պէտք է դառնայ Թիֆլիսում հիմնելի մի բարեգործական ընկերութեան։

Զ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ հաղորդում են հետեւեալ լուրը։ «Գէորգեան ճեմարանի մի աշակերտ 5 ռուբլ է ուղարկում իր ընկերոջ վրա, որ ուսանում է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում, խնդրելով ուղարկել նրան մի քանի կտոր հայոց գրքեր և ի միջի այլոց «Հայաստանի սովը և էջ-

---

ՖԵԼԻԵՏՕՆ

Վերջապէս Սարա Բերնար, ֆրանսիացի տիեզերահռչակ դերասանուհին այսօր մեկնեցաւ Վիէննայից, պարպեց ոմանց քսակները, տեղը քաղցր յիշատակ թողնելով, և ոմանց սրտին մէջ էլ ցաւ և կսկիծ զետեղելով, որովհետև շատերը չարժանացան զինքը տեսնելու։ Երանի նոցա, որք առանց տեսնելու դարձեալ հանճարին հաւատում և գնահատում են։ Ամենքը ասում են թէ անմման Պատտի երգչուհին անգամ կեանքումը այնքան յարգանք և մեծարանք չէր տեսած, որքան վայելեց Սարա Բերնար հրէուհին, աշխարհիս շրջանը անելով։ Այժմ գնում է Ս. Պետերբուրգ, անտից էլ պիտի չուէ Եգիպտոս, Հնդկաստան, Չինաստան, Ժաբոն, կարելի է մինչ հիւսիսային բևեռը։ Վիէննայում 10 ներկայացում տալու համար 25,000 ֆիորին վարձատրութիւն առաւ, ի բաց առեալ ծանրագին անթիւ ընծաները, և անձրևի նման գլխին տեղացած անհամար պսակները։ Վիէննացիներից տեսած պատիւը ոչ մի տեղում չէ տեսել։ Ինքը Վիէննա գալու համար տակաւին Փարիզից չը մեկնած 10 ներկայացման տոմսակները Ռինկ թատրոնի տնօրէնը արդէն ծախած էր, գիները սովորական գներից քառապատիկ բարձր լինելով հանդերձ։

Ներկայացման գիշերները 3—4 հազար հոգի թատրոնին առաջ խռնված էին տոմսակ առնելու համար, տոմսակ չը կար, բայց ամբոխը փոխանակ ցրվելու, բացօդեայ տեղ ձիւնին տակ սպասում էր, գոնէ դերասանուհու կառքը ողջունելու բախտից չը զրկվելու բաղձանօք։ Այս հանճարաշատ աղջկան շնորհիւը վաշխառու հրէաները լաւ դրամ շահեցան, վաղուց տոմսակներ գնելով և մի նստարանը մինչ 40—50 ֆիորինի ծախելով։

Սարա Բերնար ներկայացուց «Լա դամ օ կամէլիա», «Ֆրուֆրու», «Էրնանի», «Ադրիէն լը Կուվրէօր»։ Ինքը իջած էր Grand Hôtel հիւրանոցը, ուր տեղ 6 սենեակ վարձած ունէր, և մի սենեակ էլ իր շներին համար, որոնք խորոված հաւ էին ուտում։ Անմահ Շիլլերը չը գիտեմ որտեղ ասած է թէ, ինչ անիծեալ անհաւասարութիւն կայ մարդկային սեռին մէջ. դերասանուհի կայ որ մի կտոր միս հազիւ կարողանում է ճարել, իսկ Սարա Բերնարի շները խորոված վառեակներով են կերակրվում։ Վիէննայի զաւեշտական թերթերը զանազան կարիկատուրներով երևելի դերասանուհուն ծաղր արին, ի միջի այլոց «Գիլքերէքի» անուն երգիծաբան թերթը մի պատկեր էր շինել. Սարա Բերնար խրոխտաբար կանգնած, իր առաջը ծունկ չոքած Բերլինի թատրոնի տրնօրէնը, աղաչելով որ դերասանուհին Բերլին գայ և գոնէ 3 անգամ ներկայացում տայ, իսկ Սարա Բերնար պատասխանում է թէ, երբ պրուսացիք Ալզաս և Լօրէնը ֆրանսիացւոց կը վերադարձնեն, այն ժամանակ կը գայ և միանգամ կը խաղայ։

* * *

Երբ որ Կ. Պոլսոյ դեսպանները հերթը եկած հայկական հարցով զբաղվում էին, յանկարծ չար սատանան էլ եգիպտական հարցը և Ռուսաստանի պատերազմական տուգանաց խնդիրը փչեց. լաւ կը լինէր, եթէ յարմար առիթ գտնելով, աշխարհի վերջը գար. այն ժամանակ ոչ հարց կը մնար, ոչ խնդիր. բայց բարեբախտաբար կամ դժբախտաբար՝ այստեղ, միամիտները ահ ու դողով և բազմամիտները հետաքրքրութեամբ ի զուր սպասեցին երկրագնտիս տապալմանը. ոչ թէ աստղերը վար թափեցին, այլ մոլորակներից մի փոքրիկ քարի կտոր անգամ վար չընկաւ, ոչ թէ ջրհեղեղ, բայց ընդհակառակը այն օրը առանց մի կաթիլ անձրև գալու երկինքը սովորականից աւելի պարզ ու պայծառ էր, կարծես թէ աստղաբաշխների գուշակութիւնները ծաղրել կուզէր։

Շատ հաւանական է որ պօլսեցիք աշխարհիս կործանումը պատրաստակելով «Ժուրնալ դ'Օրիանի» բաժանորդագիները ուշացնում էին, բայց հիմայ վտանգը անցաւ, մեծ յոյս կայ որ անյապաղ կուղարկեն։

* * *

—Լսեցիր, եղբայր, Անգղիոյ խորհրդականաց ժողովին մէջ դիւանագէտ մի պարոն համակրելի մի դիտողութիւն է արել հայկական հարցի մասին. որքան պէտք է ուրախ լինինք որ մեզ համար մտածողներ կան։

—Ի՞նչպէս բան է դա։

—Ահաւասիկ, պարոնը այսպէս է ասել։ «Օսմանեան կառավարութեան Հայաստանի կամ Քուրդիստանի մէջ մտցնելիք բարենորոգմանց մասին ժողովոյս կարծեաց մեծամասնութեան կողմանէ իմ ունեցած գաղափարիս վրայօք կասկածելու կամ չը կասկածելու պատասխանատուութիւնը յանձն առնելու և ըստ այնմ խնդիրը մշակելու տեսակէտից հեռանալու կամ չը հեռանալու համար ինչ սկզբունքի վրա հիմնվելով, որ և իցէ մի առաջարկութեան պատրաստուելու փափուկ պաշտօնիցս այժմէն ինքզինքս հրաժարած համարելու տարակոյս չունենալս, և ժողովէդ գոհացուցիչ մի պատասխան ստանալու ապահով լինելս յայտնելով պարտքս կատարած կը լինեմ»։

—Ես ոչինչ չը հասկացայ, եղբայր. դա հանելուկ է, ինչ բան է։

—Ոչ, եղբայր, քու խելքդ չը հասնիր, դիպլոմաթի խօսքը որքան անհասկանալի լինի, նշանակում է որ այնքան հանճար կայ մէջը։

* * *

—Ո՞ւր ես, եղբայր չես երևում.

—Տանս մէջ փակված պարապվում եմ, մի նոր տեղական պիէսա եմ պատրաստում։

—Ի՞նչ է պիէսայիդ նիւթը։

—Նոր սերմանված ղալմաղալ։

—Դա ի՞նչ է նշանակում։

—Դա նշանակում որ իմ պիէսան նոր սերմանված է, յետոյ Սունդուկեանցի «Խաթաբալային» նման հետզհետէ կը մշակվի։

Կրա•

միածինը› վերնագրով գիրքը։ Ներսիսեան դպրոցի աշակերտը կատարում է իր բարեկամի յանձնարարութիւնը, բայց այդ գրքերը անցնելով ճեմարանի ռէկտոր Արշակ Նահապետեանի ձեռքը, դա սաստիկ բարկանում է երբ գրքերի մէջ նկատում է և վերոյիշեալ գրքոյկը, որը ոչնչացնելուց յետոյ անմիջապէս մի նամակ է գրում Ներսիսեան դպրոցի տեսչին, հրամայելով նրան, որ գրքերը ուղարկող աշակերտին նկատի, որ եթէ մի այլ անգամ նա համարձակվի այդ տեսակ գրքեր ուղարկել, Էջմիածնի ճեմարանի վարչութիւնը իրաւունք կունենայ նրան աքսորել Ներսիսեան դպրոցից։ Ուրեմն այժմ ճեմարանը վերին աստեան է դարձել Ներսիսեան դպրոցի համար, իսկ Նահապետեան բոլոր դպրոցների տեսուչների գլխաւոր։›

—

Մենք իմացանք որ այժմ Ներսիսեան դպրոցում կրօնի և մարդակազմութեան ուսուցիչներ չը կան։

—

Թիւրքաց Հայաստանից ստացված մասնաւոր նամակներից տեղեկանում ենք որ քիւրդերը Բաղէշի կողմերում, որոնք առաջ, սարերից իջնելուց յետոյ միշտ կասպատակէին հայ գիւղերը և մեծ աւարով յետ էին դառնում, այժմ, հայոց կողմից անձնապաշտպանութեան փորձերից յետոյ, այլ ևս չեն վտահանում հայ գիւղերին մօտենալ։

—

ԹԻՖԼԻՍԻ ռուսաց թատրոնական խումբը թողել է մեր քաղաքը։ Քաղաքային թատրոնը մնում է առժամանակ առանց ռուս ներկայացումների, բայց ասում են որ այս օրերս գալու է Վլադիկավկասից մի այլ ռուսաց խումբ։ Այդ խմբի մասին էլ ասում են թէ չատ թոյլ է։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են։ ‹Քաղաքիս առուտուրը ընկած է, գլխաւորապէս այն պատճառով, որ սահմանագլուխը հեռացաւ մեզանից։ Իսկ տեղային արդիւնաբերութիւնը չատ աննշան լինելով, չատերը մեր վաճառականներից սկսեցին թողնել Ախալցխա և տեղափոխել իրանց առևտրական գործերը նոր նուաճած երկիրները՝ Կարս, Արդահան, Օլթի, Բաթում։ Մթերքների գները ցածանում են օրից օր։ ալիւրի պուդը արժէ այժմ 1 ր. 20 կ., գարին 60 կ., իւղը (կարագ) 10 ր. 50 կ., մսի ֆունտը 8 կ., ձուի 4 հատը 5 կ., կարտոֆիլի պուդը 35 կ., կաղամբը 30 կ։ Հոկտեմբերի վերջին եկած առատ ձիւնը հալվեցաւ այժմ։›

—

Մեր թղթակիցը գրում է մեզ ՍՏԱՎՐՈՊՈԼԻՑ։ ‹Ձեր լրագրի մէջ յայտնած մտքերը առհասարակ կտակների մասին և մանաւորապէս պ. Պոպովի արած կտակի մասին, չատ ուղիղ են։ Այսպիսի մեծ կտակ անել, ինչպէս արաւ Պոպով, չատ հազիւ է պատահում և նոյն իսկ այդ պատճառով նա պէտք է չատ զգոյշ կերպով վարվէր։ Մինչև կտակ անելը նա պէտք է խորհուրդ տեսնէր ազգային գործերին լաւ ծանօթ մարդկանց հետ։ Սոքա կարող էին խորհուրդ տալ թէ այժմեան ժամանակին որտեղ և ինչ գործում մեզ աւելի հարկաւոր են փողերը։ Ճշմարիտ է Պոպով նախքան կտակ անելը խորհրդակցեցաւ իր մի քանի բարեկամների հետ, բայց սրանք, ի հարկէ, նոյնքան անզարգացած մարդիկ են, ինչպէս և ինքն կտակողը։ Բայց այդ տեսակ նշանաւոր գործ վճռելու համար, կտակողը պէտք է իսկապէս դիմէր մեր ազգային մամուլին, որ հասարակական կարծիքի այլ և այլ կուսակցութիւնների միակ ներկայացուցիչ է մեզանում։ Թէև հակառակ մտքեր չատ կը յայտնվէին, բայց վերջը հարցը, այնու ամենայնիւ, կը պարզվէր։ Թող վերջապէս հասկանան հայերը որ այժմեան ժամանակին, առանց մամուլի օգնութեանը դիմելու, անհնարին է գործել հասարակական ասպարիզում։ Անցան այն ժամանակները, երբ մի գործ կատարելու համար, բաւականանում էին դիմելով այս կամ այն քաղաքում ապրող իմաստուն համարված մի որ և է ինքնահաւան և տգէտ պատգամախօսին։ Այժմ հասարակական օգտի համար հարկաւոր է հրապարակապէս քննադատել տալ մամուլի, հասարակական կարծիքը այդ արտայայտողի միջոցով, իր բոլոր հասարակական գործունէութիւնները։ Մամուլը, լրագրութիւնը ահագին ոյժ է և քանի կերթայ, աւելի և աւելի մեծ ոյժ կը դառնայ։›

—

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ԽՆԴԻՐ

—

„Journal d'Orient" լրագրի մէջ կարդում ենք հետևեալ յօդուածը։

Այն շօշափելի իրողութիւնը որ Բ. Դուռը անդադար տեղափոխում է Վանի նահանգը մահմեդական գաղթականներին և երևելի քիւրդ աւազակապետ Իբադուլլահի Էրզրում հասնելու լուրը, մեզ հասկացնում են այդ գործողութիւնների նպատակը։ Երբ դեսպանները առաջին անգամ սկսեցին խօսել Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածի գործադրութեան մասին, Բ. Դուռը աղաղակեց. „Թիւրքիայում չը կան նահանգներ, որոնք բնակեցրած լինէին հայերից, որովհետև Էրզրումի, Վանի, Սվազի, Խարբերդի, Դիարբէքիրի և Հալէպի վիլայէթներում հայերը ցրված են և ընդհանուր ազգաբնակութեան թւից 16% են կազմում, բնակվելով թիւրք կամ մահմեդական խիտ ազգաբնակութեան մէջ։" Եթէ պետութիւնները ընդունած լինէին այդ դատողութիւնը, հայոց խնդիրը յաւիտեանս թաղված կը լինէր։ Բայց Կ. Պոլսի հայոց պատրիարքի եռանդը պատրաստեց մի շանթահար պատասխան. նրա կարդադրութեամբ արած ժողովրդագրութիւնը ապացուցեց որ վեց վիլայէթների մէջ մահմեդական ազգաբնակութիւնը կազմում է 40%, իսկ հայերը նոյն երկիրներում կազմում են 60% ընդհանուր ազգաբնակութեան թւի մէջ։ Բօպէն շատ յարմար էր գործելու, բայց դժբաղդաբար Գերմանիան և Աւստրիան պահանջեցին որ նախ կարդադրվի Զերնոգօրիայի խնդիրը, իսկ հայոց խնդիրը չը յարուցվեցաւ այդ յարմար բոպէում։

Այդպիսով մարտիրոս ազգի կորուստը, շարունակում է Վիէննայի թերթը, վերջնական կը լինէր այդ ժամանակամիջոցում, որովհետև թիւրքերի բոլոր ջանքերը ուղղված էին հայերին յիշեալ վեց վիլայէթներում ջնջելու, կամ գոնէ նրանց համեմատական թիւը պակասեցնելու, բնակեցնելով նրանց մէջ քիւրդերի, չերքէզների, մահմեդական ալբանցիների գաղթականութիւնները։

Որքա՞ն մեծ պատասխանատուութիւն կը կրէր Եւրոպան, եթէ թոյլ տար կատարվելու այդ խորամանկ գործին։ Տեղական պաշտօնեաների գեղծումներին, մահմեդական աւազակների գործողութիւններին դաշնակից էր յայտնվել սովն էլ։ Երկիրը կորցրեց իր բնակիչների մի մաս, բայց կարծես նախախնամութեան կամքով նոյնքան և աւելի մահմեդական են զոհ գնացել, քան թէ հայերը։

Բայց սկսած գործը շարունակվում է յանդգնութեամբ։ Մենք դրա վրա մատնացոյց ենք անում այն անձանց, որոնք չեն կամենում ոչ լսել, ոչ էլ տեսնել։ Պէտք է, վերջապէս, որ 61-որդ յօդուածը կատարվի։ Թող թիւրքաց հայերը, որոնք յուսահատված են և կարծում են որ նրանց դատը անտես է առնված, սիրտ առնեն. օգնութիւնը կը գայ։ Այն ստորագրութիւնները, որոնք դրված են Բերլինի դաշնագրի տակ, չեն թոյլ տալիս ոչ մի պետութեան ոչ տատանել, ոչ էլ յապաղել։

Թիւրքերի նենգութիւնը, վերջացնում է իր խօսքը „Ժուրնալ դ'Օրիան", պարտաւորեցնում է Եւրոպային գործելու առանց յապաղման։

—

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

—

Աւասիկ այն հրաժարագիրը, զոր երէկի նստին մէջ կարդաց Տ. Մինաս Չերազ։

Պարոններ. Մայիս 17-ին, երբ ատենապետ ընտրեցիք զիս, յայտնեցի թէ անարժան էի այս բարձր պաշտօնի, այլ յարեցի. „Միակ տենչս է հաւատարմապէս գործադրել ձեր որոշումներ և բարելաւել Ընկերութեան վիճակն։" Այսօր որ կը հրաժարիմ պաշտօնէս, կը համարձակիմ հռչակել թէ այդ տենչ իրագործուած է, շնորհիւ այդ աջակցութեան զոր պաշտօնակիցներս ընծայեցին ինձ։

Արդարև, Տնօրէն Ժողովն, իւր կազմութեան առաջին օրէն ի վեր, կէտ առ կէտ գործադրած է կենդրոնական ժողովի բոլոր որոշումներն, յարգելով խորհրդարանական ազատութիւնն։ Նա, Հայաստանի և Կիլիկիայի տեղական պէտքերն ըստ կարի ուսումնասիրելէ յետոյ, պարզած է ձեր առջև իւր հիմնագիրը, որ կը տրամադրէ ծաւալել նախակրթութիւն ամեն հայաբնակ կենդրոնի մէջ ուր դպրոց չը կայ և աղքատութիւն կը տիրէ. նա բերած է ձեզ իւր կրթական յայտագիր և իւր ելմտացոյց. նա պատրաստած և գործադրած է թաղային կանոնագիրն, այր արդէն սկսած եմք քաղել պտուղներն. նա պատրաստած և գործադրած է ճիւղային կանոնագիրն, որ շատ արդիւնաւէտ պիտի լինէր, թէ Սովետից խնամատար կենդրոնական ցանձնաժողովն հաճէր հաղորդել մեզ իւր ճիւղային ցուցակ, որպէս զի նպաստ խնդրէինք այն ազգբիւրներէ ոյց նա դիմած է այնքան աջողութեամբ, ցուցակ որ զլացուեցաւ մեզ, շնորհիւ այն փոքրոգի մեքենայութեանց որք պաշարեցին զմեզ մեր ընարութեան թուականէն ի վեր։ Երբ կոչուեցանք պաշտօնի, Ընկերութիւնն ուներ 27 փարժարաններ. այս թիւ բարձրացած է այժմ 32-ի, մինչ Ընկերութեան տարեկան ծախքն ոչ միայն չէ աճած, այլ և նուազած է 1,300 ոսկոյ չափ, խնայողութիւն որ վանեց տնանկութիւնն և կազդուրեց և երկարեց Ընկերութեան կեանքն։ Արդի Տնօրէն Ժողովն, թէև սակաւակեաց, աշխարհի դրամական անձկագոյն տագնապին մէջ գտնձած է գրեթէ 2,100 ոսկիներ, այց փոքրագոյն մասն կը պատկանի նախորդ վարչութեան, այնպէս որ ներկայն կընծայէ արդէն ամսական 60 ոսկոյ յաւելում անցեալին վրայ, առանց պարահանդէսի։ Ուրեմն այս Տնօրէն Ժողով հաստատած է մի դրութիւն որով Ընկերութիւնն, իբր խնայողութիւն և իբր հասոյթի առաւելութիւն, կը շահի տարեկան 2,000 ոսկի։

Ահա, պարոններ, մեր հակիրճ համարաւութիւն, որ կը վկայէ ձեզ թէ բարւոքած եմք Միացեալ Ընկերութեանց վիճակն բարոյապէս և նիւթապէս։ Տարակոյս չը կայ որ այդ բարւոքում պիտի լինէր անհամեմատ աւելի ընդարձակ, թէ ներքին և արտաքին դաւեր չը զային չէզոքացուցանել վարչութեան ճիգերն։ այլ ժամ է փարատել զայնս, անյիշաչարութեամբ և սիրայօժար գործակցութեամբ։

Երբ այս կրթական միութեան դեկն յանձնուեցաւ ինձ, ունէի ազատ ժամանակ, և աշխատեցայ գարունէն ի վեր, Ընկերութեան գրասենեակին մէջ անցուցանելով եղանակի գեղեցկագոյն օրերն։ Այժմ կը հրաժարիմ, զի նորէն ստանձնեցի այն պաշտօն զոր կը վարէի Պատրիարքարանի մէջ և որ ահա կը գրաւէ գրեթէ ամբողջ ժամանակս։

Շնորհակալ եմ ազնիւ պաշտօնակիցներս, որք լուսաւորեցին զիս իւրեանց իմաստուն խորհուրդներով և որք, իւրեանց անձնուէր ճիգերով, բարձրացուցին Ընկերութիւնն մի վիճակի որ անծանօթ էր նմա։ Շնորհակալ եմք կենդրոնական ժողովին, այր մեծամասնութիւնն մեզ հետ եղաւ ամեն ճգնաժամի մէջ, իւր լայն վահանի տակ պատսպարելով պաշտօնէութիւնն ամեն սըլաքի դէմ։ Շնորհակալ եմք յատկապէս Բարձրաշնորհ Պատրիարքէն, որ մեր օրով, նուիրեց Ընկերութեան գրեթէ 400 ոսկի, իւր առատասրտութեամբ աղօտացուցնելով մեր մեծամիտ մեծատուններ։ Շնորհակալ եմք նաև հայ ժողովուրդէն և հայասէր օտարներէն, որ համակրանք յայտնեցին մեզ Տաճկաստանի ամեն անկիւններէն, Պարսկաստանէն մինչև Իտալիա, և Ռուսաստանէն մինչև Ֆռանսա և Անկլիա։

Ընկերներս և ես կը հրաժարիմք մեր պաշտօններէ, այլ, որքան ներէ մեր ժամանակ, պիտի շարունակեմք Ընկերութեան մեծ գործին ձօնել մեր տկար աջակցութիւն, մանաւանդ երբ մեզ յաջորդ ունենամք այն նշանաւոր երիտասարդ (Ալէքսանդր ՄէրեէմԳուլի, փաստաբան), զոր մեր շուրթեր կանուանեն արդէն և որ անշուշտ պիտի ընտրէ ազգասէր, պարկեշտ և ձեռնհաս պաշտօնակիցներ։

(Մասիս)

—

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

—

Շատեր ամենախորին ցաւ կը յայտնէին տեսնելով Ազգ. Ժողովոյ վիճակն, որ ներուի մեզ ըսել, գրեթէ բոլորովին կորուսած է իր պատկառանքն ու նշանակութիւնն, որոյ մէկ տխուր օրինակն ալ տեսնուեցաւ դըժբաղդաբար այս հինգշաբթի։

Ազգային պատուոյ զգացումը բնաւ չը նեղեր որ նոյն օրուան նկարագրութիւնն ընենք։ Միայն սա չափը կըսենք թէ՝ ալ համը փախաւ. ուստի ազգին խնայելու համար աղէկ կըլլայ որ ներկայ երեսփոխանութիւնը խմբովին հրաժարի, քան թէ այս վիճակին մէջ պաշտօն վարէ։

Մեր այս առաջարկութիւնը շատ բանաւոր է և ահա իրաց վիճակն ալ այնպէս կը պահանջէ, որովհետև ներդաշնակութիւն չը կայ Ս. Նախագահին, Դիւանին և անդամոց մէջ, միայն կիրք կայ, և անվստահութիւնը կը տիրէ։

Այս ամենատխուր վիճակը խորին ցաւ և մեծ վիշտ պատճառած է թէ երեսփոխանաց շատին և թէ ժողովրդեան։

Արդ, երբ երեսփոխանութիւնն ընդհանուրին վստահութիւնը չը վայելեր և երբ իր և Նախագահին մէջ անհամաձայնութիւն կը տիրէ և որովհետև Ն. Սրբազնութիւնը ժողովուրդին համակրութիւնը կը վայելէ, ազգին շահը կը պահանջէ որ հրաժարի, այն պայմանաւ՝ որ անմիջապէս նոր ընտրութիւնք կատարուին։

Ամեն սահմանադրական ազգաց մէջ այսպէս կըլլայ։ Եւ որովհետև մենք ալ սահմանադրական ազգ մ'ենք, հարկ է ուրեմն որ խնդրոյն լուծումը ժողովրդեան կամացը ներկայացուի։

Եթէ չուզէ երեսփոխանութիւնն այս փորձն ընել, գուցէ խնդիրն օր մը զինքը լուծէ, և այն ատեն Սահմանադրութիւնն ալ վտանգուի։

Հետևաբար, ներկայ Երեսփոխանութիւնն իմաստութեամբ վարուած և վտանգին առաջքն առած կըլլայ, եթէ միաձայնութեամբ ընդունի մեր սոյն առաջարկը։

Փափաքելի է որ ամբողջ ազգային մամուլն այս մասին իւր կարծիքն յայտնէ։

(Լոյս)

—

ԻՏԱԼԻԱ

—

Վերջին ժամանակներում Հռոմի պապը, չը նայելով իր կեղծ չէզոքութեան վրա, քաղաքական մի քանի նշանաւոր յաղթութիւններ արաւ, և Վատիկանը, որի վրա այլ ևս ուշադրութիւն չէին դարձնում Եւրոպայում, կրկին մեծ պետութիւնների հոգատար ուշադրութեան առարկայ դարձաւ։ Գերմանական կայսրութիւնը կամենում է հաշտվել կաթոլիկ եկեղեցու հետ։ Իշխան Բիսմարկ, ճշմարիտ է, դիտաւորութիւն չունի „Կանոս գնալ“, բայց փոխադարձ համաձայնութիւնը անփախչելի է դառնում, և կաթոլիկ հոգևորականութեան իրաւունքները կը վերականգնվեն Պրուսիայում համարեա նոյն ձևով, շնորհիւ գերմանական պարլամենտում կենտրոնի կուսակցութեան ցոյց տուած հաստատամտութեան և ջանքերին։ Առաջին քայլերը Բերլինն է անում անպատակ „կուլտուրական կուիից“ կատարելապէս հրաժարվելու մաքով։ Գերմանիայի սահմաններում Վատիկանի նշանակած եպիսկոպոսներին թոյլ է տրվում իրանց պարտաւորութիւնները կատարել, առանց նախապէս երդում տալու կայսրին և գործադրող օրէնքներին հաւատարիմ լինելու մէջ։ Մինչև այժմ ազատ եղող եպիսկոպոսական տեղերի վրա նշանակվում են նոր եպիսկոպոսներ, առանց մի որ և է արգելքի գերմանական իշխանութիւնների կողմից։ Վատիկանի դիպլոմատներից մէկը, Սպոլվերինի, ինչպէս ասում են, գաղտնի լիազօրութիւններ ունի բանակցելու իշխան Բիսմարկի հետ մէկ հաստատ modus vivendi սարքելու համար գերմանական կայսրութեան հետ։ Մի և նոյն ժամանակ անգլիական կիսապաշտօնական պատգամաւոր, պարլամենտի անդամ Երինգտոն այժմ Հռոմի հետ „մասնաւոր“ դիպլոմատիական բանակցութիւններ ունի, որի նպատակն է պապի պաշտպանութիւնը ձեռք բերել Իրլանդիայի կաթոլիկ հոգևորականութիւնը խաղաղացնելու համար։ Մի և նոյն ժամանակ Աւստրօ-Ունգարիան կարդինալ Գանգլբաուէրի և կոմ Պաարի միջոցով աշխատում է հաշտեցնել պապութիւնը իտալական թագաւորութեան հետ։ Մի խօսքով Եւրոպայում ամենքը հաշտվում են Վատիկանի հետ, և միայն Ֆրանսիայումն են եկեղեցու գործերը վատ գնում, որովհետև մինիստրութեան մէջ պաշտօն են ստացել կաթոլիկութեան այնպիսի քաջ թշնամիներ, ինչպէս պրօֆէսօր Պոլ Բէր և ուրիշները։

ԵԳԻՊՏՈՍ

—

Եգիպտական գործերը սաստիկ խառն դրութեան մէջ են գտնվում, չը նայելով որ անգլիական լրագիրները չեն կամենում Եգիպտոսի անցքերին մեծ նշանակութիւն տալ։ Հաւատացնում են, որ Շերիֆ-փաշա վերականգնեց կարգը գօրքի մէջ, և որ ապստամբ գունդերը կայիրէից հեռացրեց։ Այն ինչ, անցեալ շաբաթ հասարակութեան մէջ լուր տարածվեցաւ, թէ մէկ Ֆրանսիացի ժուրնալիստ, որ համարձակվել էր հաստատել թէ Մահմէդը սուտ մարգարէ էր, ստիպված էր Եգիպտոսից հեռանալ, որովհետև Ֆրանսիական հիւպատոսը երաշխաւոր չէր կանգնում նրա ապահովութեան համար։ Միայն այդ փաստը արդէն ցոյց է տալիս, թէ ինչ դրութեան մէջ են գործերը Եգիպտոսում։ Ազգային զգացմունքը, պաշտպանված կրօնական ֆանատիկոսութեամբ, սկսում է արագ կերպով զարգանալ այդ երկրում, որը նայում է այժմ իր զինուորների վրա, որպէս հայրենիքի համար կուռողների վրա։ Ազգային զգացմունքը վրդովվում է անգլօ-ֆրանսիական կոնտրոլի դէմ։

Եգիպտոս ապրող օտարականները, որոնք մի քանի շաբաթով միայն հեռացել էին այնտեղից, կրկին Եգիպտոս վերադառնալով, զարմանում են եգիպտական ժողովրդի այդ կարճ ժամանակվայ մէջ պատահած փոփոխութեան վրա։ Նախկին կամակատարութեան և ստրկահոգութեան փոխանակ, նրանք պատահում են թշնամութեան և կոպտութեան։ Եգիպտացիները շատ լաւ հասկանում են Ֆրանսիայի և Անգլիայի փոխադարձ յարաբերութիւնները. նրանք գիտեն որ նրանց մէջ մրցում կայ, որը չի թոյլ տայ նրանց. ոչ միասին, ոչ էլ առանձին առանձին դիմել զինաւորված ուժին։ Այդպիսով մէկ գեղեցիկ օր, կարող է պատահել, որ ապստամբ գունդերը Կայիրէ կը վերադառնան և որ անգլօ-ֆրանսիական վերահսկողութեանը վերջ կը դրվի։ Ցոյս կայ, որ Եգիպտոսում բանը այնտեղ չի հասնի, որ Եւրոպացիներին կոտորեն, այնու ամենայնիւ զգուշութեան համար աւելի լաւ կը լիներ վճռել եգիպտական հարցը։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 2 Նոյեմբերի

Կը նայես չորսի չուրջդ, կը դիտես գործերի ընդհանուր ընթացքը, ուշադրութիւն կը դարձնես և այն ընդհանուր ոգևորութեան, որ պատել է համայն հայութիւնը Հնդկաստանից սկսած մինչև Կ. Պոլիս, Կ. Պոլսից սկսած մինչև Ամերիկայի գաղթականութիւնը, կուզես յարմարվիլ այդ ոգևորված տրամադրութեան գոնէ թղթի վրա մի երկու մխիթարական խօսք ասելու, բայց ինչպէս դառնայ լեզուդ ուրախ կերպով խօսելու համար, երբ իսկութեան մէջ չը կայ ոչինչ այդ ոգևորութեան համապատասխանող, բացի միայն բօթ, դաւ, ցաւ և կորուստ։ Բօթ Հայաստանից, բօթ ազգային գործիչների ընթացքից, բօթ եկեղեցու ներկայացուցիչներից, բօթ գրագէտների և մրոտողների ուղղութիւնից, բօթ իւրաքանչիւր ազգային շարժման մէջ...

Տեսնելով հայկական հարցի ստացող բարեյաջող կերպարանքը, տեսնելով մի կողմից եւրոպական պետութիւնների արած ջանքերը հայ ազգի բաղձանքները պակելուն նուիրած, միւս կողմից էլ Թիւրքիայի տրամադրութիւնը քիչ թէ շատ յամառվել զիջումներին,—հէնց այսպիսի մի ժամանակ մէկ էլ տեսար դուրս եկաւ խարդախների մի այնպիսի խումբ, որը սկսեց կաչկանդել Ներսէսի ձեռքերը, խոցոտել առանց այն էլ նորա վիրաւորված հոգին և խանգարել ընթացիկ գործերի բոլոր ներդաշնակութիւնը։ Երբ Թիւրքիան պատրաստում է Հայաստանի վերակազմութեան ծրագիր, պատրաստում է ընդարձակ ցուցակ հայ պաշտոնեաների, ադմինիստրացիայի և դատաստանական ճիւղի մէջ բարձր դիրքեր կատարելու համար, երբ այսպիսով գործը ընթանում է ամենահանգիստ և մխիթարական ճանապարհով, այսպիսի մի ժամանակ մէկ էլ տեսար համայն հայ և օտար մամուլը թնդաց հայոց ներքին երկպառակութիւնների և գժտութիւնների գործով։ Բայց ով է այս գժտութիւնների չար խնձորը մէջ գցողը. ով է ազգի այս ներքին և արտաքին անդորրութիւնը վրդովողը, ով է օտարների առաջ հայոց անունը ու նամուսը գետին գցողը։—Միշտ մի և նոյն դատաճանները, միշտ մի և նոյն վատահոգի փառամոլները, որոնք տեսնելով հայոց հարցի լուծման մօտենալը, կուզեն անցնել ազգային վարչութեան գլուխը տաք տաք տեղեր և գէր գէր կաշառներ յափշտակելու համար։ Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան, որ կը ճգնի Ներսէսին տապալել ու նորա տեղը անցնել, Յարութիւն Մերէեմ—Գուլի, Թադէոս Բէգեան, Ստեփան Փափազեան—ահա այս վատ արարածներն են ազգի միութեան ու ներդաշնակութեան բոլոր գործը խանգարողը։ Ի՞նչ ճար գտնես սոցա դէմ, ինչով չարժես և խղճահարես այդ դաժան սրտերը, այդ լրբացած երեսները... Երևակայեցէք թէ իսայտառակութիւնը որ կէտն է հասել, որ նաև Stamboul և Phare du Bosphore օտար թերթերն անդամ կը խղճան հայոց վրա ու ամբողջ շաբաթ հրաւէր հրաւէրի վրա կը կարդան վերոյիշեալ ժպիրհ արարածներին զսպել քիչ իրանց կրքեր և գնահատել ազգային ճգնաժամի սաստկութիւնը. բայց որի վրա կազդէ և որի երեսը կը մանէ...

Ցաւում եմ, որ չեմ կարող ուղարկել ձեզ այս օրվայ բոլոր հայ թերթերը (նոցա շատութեան պատճառով), որ տեսնէք թէ ինչ վիշտ և ցաւ է պատել նոցա այս դառնագոյն ներքին լնարիգաներին պատճառով։ Այսօրվայ «Մասիսի» մէջ տպված է Phare du Bosphore-ի խմբագրի մի մեծ առանձին հրաւէրը դէպի վերոյիշեալ անձինք և համայն հայութիւնը խղճալ իրանց ապագան և «անձնուիրաբար» աշխատել նորա համար, բայց մթթէ Մատթէոս Իզմիրլեան, Յարութիւն Մերէեմ-Գուլի, Թադէոս Բէկեան և Ստեփան Փափազեան անձնուիրութիւն բառը կարող են հասկանալ. նոցա սիրտը ցեխ է պատած, մրտքը դաւ, հոգին ժանգ։ Բարեսիրտ օտար խմբագիրը ամբողջ մի երես է խօսում այսօր «Մասիսի» մէջ, բայց դեռ նորա խօսքերը դէպի հայերը չեն վերջացած և վաղն էլ պիտի շարունակվեն։

Մարդ չը գիտէ ինչպէս կարդայ այդ տողերը. տեսնելով հայի դերը օտարը առած. իսկ օտարինը հայը. ինչ պիտի լինի մեր ազգի վերջը, որը բոլոր ազգերից միայն յետ ընկածն է և այն էլ այսչափ անսիրտ դէպի իր ապագայ սերունդի բաղդը... էլ ուրիշ հնար չը կայ, իւրաքանչիւր հայ պիտի բողոք բառնայ, իր ձայնը տայ, ինչպէս ընդհանրութեան անդամ, ինչպէս ազգային մի անհատ, որ այդպիսով գոյանայ մի ընդհանուր ազգային զայրոյթ, որի առաջ գուցէ սարսեն ու յետ կասեն վերոյիշեալ բաղդախնդիրները և դաւաճանները...

Կարծես այդ ամենը քիչ էր, Հայաստանից եկող լուրերն էլ միւս կողմից օգնութիւն հասան իւրաքանչիւր հայ սրտին վերջի մահարեր հարուածը հասցնելու համար. այսօր տեղեկագրեր թափվեցան խեղճ անօգնական և գայլերից պատառոտվող Ներսէս պատրիարքի գլխին Հայաստանի բոլոր կենտրոններից, թէ եզուիտների մի մեծ լեգէօն ցանցի պէս սփռված հայրենիքի հողի վրա, ամեն կողմից հարիւրներով յափշտակում են ազգի որդիքը և գլորում նոցա լատինականութեան անդունդը։ Եվդոկիա, Ամասիա, Արզվան, Խարբերդ, Մալաթիա, Սամսուն, Վան, Աղանա և ուրիշ տեղեր հաստատվել են Ֆրանսիայից արտաքսված եզուիտների մեծամեծ կոնգրեգացիաներ, որոնք բաց աչկարաց գործ են ածում ամեն բնութիւն և ամեն տեսակ սոսկալի դաւերից միջոցներ հայոց ներքին խաղաղութիւնը վրդովելու և հոգին տանջելու համար։ Ի՞նչ անել Ներսէսը, որը մի բոպէ հանգստութիւն չունէ եզուիտներից էլ վատ հրէշների ձեռքից, ինչպէս Մատթէոս Իզմիրլեան, Թադէոս Բէգեան և այլն։ Արդեօք ինչով պէտք է բացատրել էջմիածնի անտարբերութիւնը դէպի տաճկահայոց իր հօտը. մթթէ նորա տարաբաղդութիւնը հայ եկեղեցուն և իրան չէ վերաբերվում. մթթէ էջմիածնի պատասխանատուութիւն չունի հայերի մասին, երբ ազգաբնակութեանը սպառնում է եզուիտների լեգիոնը....

Ի՞նչ սրտաշարժ բան. Հայաստանից եկող դանգատները ոչ թէ միայն հայ լուսաւորչականների կողմից են, այլ ևս հայ կաթոլիկների և հայ բողոքականների էլ, որոնք տեսնելով իրանց ընդհանուր թշնամի եզուիտները, բոլորը միացած «հայ ենք» աղաղակով օգնութիւն են խնդրում Ներսէս պատրիարքից։ Ի՞նչ անէ մի հատ մարդ, որին և ինչով օգնէ։ Ամեն կողմից լսվում է, որ ժողովրդի մէջին և ստորակարգ դասակարգը խիստ մեծ յուզմունքի մէջ է ազգային ժողովի վերոյիշեալ երեսփոխանների վատ արարքներից պատրիարքի դէմ, վասնզոյ օրից օր երկիւղը մեծանում է։ Աստուած պահէ այսպիսի չարիքներից. այն ժամանակ մահանա բռնած, Թիւրքիան կարող է խեղդել հայոց բոլոր ներքին ազգային շարժումները և նաև ջուրը ընկղմել Հայաստանի վերանորոգութեան գործը։ Եւրոպացոց էլ շատ միջամտելու տեղիք չի մնայ, չը նայելով Բերլինի դաշնադրութեան պահանջներին, որովհետև Թիւրքիան կարող է ապացոյց բերել հայերի վարչական տգիտութիւնը նոյն իսկ Կ. Պոլսի մէջ։ Եւ գործին տեղեակ մարդիկ կապահովեն թէ Իզմիրլեան եպիսկոպոսը և միւս երեք վատահոգի երեսփոխանները գործիք եղած են հայոց սահմանադրութիւնը ջնջել տալու և Հայաստանի բարենորոգումների գործը քանդելու համար։ Փափազեանի և Բէգեանի պէս արարածները ստեղծված են միայն այդպիսի ցեխոտ դերերի համար...

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լրագիրները հաղորդում են, որ կայսր Վիլհելմ երկարատև խորհրդակցում էր իշխան Բիսմարկի հետ. ասում են, որ կանցլերին ամեն տեսակ լիազօրութիւններ կը տրվեն, ինչ որ նա կարող է ցանկանալ, և որ այդ պատճառով կանցլերական տագնապ վերջացած է։ Թէ ինչ բան կը ձեռնարկի իշխան Բիսմարկ,—դեռ ևս յայտնի չէ։ Վերջին կրիսիսում թագաժառանգի մասնակցութեան լուրը հերքվում է բոլոր լրագիրներից։ Կայսրը անձամբ կը բաց անի ռեյխստագը և այդ բանը կապ ունի նշանաւոր վերանորոգութիւնների և սահմանադրական փոփոխութիւնների պահանջի հետ։ Ազատամիտ կուսակցութիւնները աշխատում են հաստատ կազմակերպութիւն տալ իրանց, որ կարողանան նոր կառավարութեան մեծամասնութիւն կազմել, եթէ կանցլերը հաշտվի ազատամիտների հետ։

—Աւստրիական լրագիրները հաղորդում են, որ Վիէննայի արքեպիսկոպոս կարդինալ Գանգլբաուէր իր Հռոմ արած ճանապարհորդութենից Վիէննա վերադարձաւ։ Նրա ճանապարհորդութեան հետանքի մասին դեռ ևս ոչինչ յայտնի չէ, որպէս և Վատիկանի աւստրիական դեսպան կոմ Պաարի միսիայի մասին, որը, իտալական թագաւորի աւստրիական կայսրին այցելելուց յետոյ, իսկոյն Վիէննայից հեռացաւ։ Հաստատում են, որ Աւստրիայի միջնորդութեամբ Կվիրինալի և Վատիկանի մէջ հաշտվելու փորձեր են լինում։ Կայսր Ֆրանց Յովսէփ միտք ունի այցելել Հռոմբէրտ թագաւորին, որ անկասկած անորժելի կը լինի իտալական կառավարութեանը, և անանորժ—պապին։ Այժմ աշխատում են առաջուց հաշտեցնել պապին այդ այցելութեան կարելիութեան հետ և կամենում են խօսք առնել նրանից, որ այդ դէպքում նա ոչինչ ծայրայեղ միջոցների չի դիմի, այսինքն չի հեռանայ Հռոմից։ Որպէս վարձատրութիւն պապին խոստանում են, որ աւստրիական կայսրը կայցելի Վատիկանը։

—Իտալական լրագիրները հաղորդում են. Հաստատ աղբիւրներից տեղեկացնում են, որ իտալական մինիստրութիւնը փոփոխութիւնների կենթարկվի։ Մինիստրներից մի քանիսների տեղ, որոնք արմատական կուսակցութեան են պատկանում, կը նշանակվեն աւելի չափաւոր ուղղութեան տէր մարդիկ։ Կրիսպի Փարիզում է գտնվում, և բանակցում է Գամբէտտայի հետ. նա կամենում է իմանալ ֆրանսիական առաջնորդող մարդկերանց կարծիքը իր կանդիդատուրայի մասին իտալական դեսպանի պաշտօնի վրա Փարիզում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 Նոյեմբերի։ Այսօր առաւօտեան 6 ժամին վախճանվեցաւ զեներալ-ադիւտանտ Նէպոկոյչիցկի։

ԲԵՐԼԻՆ, 10 Նոյեմբերի։ Բայխստագը սոցիալիստների մասին օրէնքի հիման վրա երկարացրեց մի տարով Բերլինի պաշարական դրութիւնը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 Նոյեմբերի։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է. մօտերումս սպասվում է հրաման զօրքերին հագուստի համար ռուսական ձևով։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արտասահմանից եկած մի վարպետ շինում է պատրաստ և զաքազով ընդունում է Լժան ու լաւ քան թէ ուրիշներ, կենդանակերպ ծաղիկներով զանազան տեսակ գերեզմանական արձաններ։ Հավլաբար, Շիրաձխանայի վերի ծայրը, ապտէկայի կարգը № 32 խանութը։

3—15

Երաժշտական խանութում, որ գտնվում է Արծրունու գալլերէայում, բէատօրանի մօտ, երաժշտական իրերով առուտուրը շուտով կրձատելու պատճառով, այս նոյեմբերի 6-ից սկսած վաճառվում են սաստիկ արժան գներով նոտաներ, երաժշտական գործիքներ, ջութակներ, ֆլէյտաներ, կլարնէտներ, վիոլօնչէլներ, գիտարներ և այլ երաժշտութեան վերաբերեալ իրեր բուրլուց մինչև 80 կոպէկ ՋԻԶՈՒՄՈՎ։

3—10

ԲԱԹՈՒՄԻ
ԿՕՄԻՍԻՕՆԷՐ
ԱՐՇԱԿ ԾԱՏՈՒՐԵԱՆՑ

Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ, յանձնարարութիւններ և ապահարանք։

10—20

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ 4 ր., ծրծողներ 1 ր., ծալվող աթոռներ 1 ր. 50 կ., ՓԱՑՏ-ԱԹՈՌ 4 ր., ԲԱԶԿԱԹՈՌ-ՄԱՀՃԱԿԱԼ 10 ռուբլ և աւելի, թէյի բաժակներ 25 և 30 կ., մի աման քորոցներ 50 կ., պաստելա ծխողների համար 60 կ. ֆունտը, անգլիական ՎԱՆՆԱՆԵՐ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։

10,000 զոյգ գուլբաներ 25 կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.—1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բամազէյ 1 ր.—1 ր. 30 կ., պարուսինա 40 կ.—1 ր., 300 հատ րէվոլվեր 4 ր.—35 ր., 700 ալբոմ ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000 -ֆունտ թէյ թէցԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ.։ ԵՐ-կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար։ Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ։

51—100

ВЪ ЭРИВАНѢ

Окончившій курсъ среднеучебнаго заведенія даетъ уроки по всѣмъ предметамъ **Гимназіи**, а также по **нѣмецкому и французскому** языкахъ.

Узнать въ книжномъ магазинѣ Г. Гуламирянца.

1—5

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Կուկիոյ սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ „Թանդոյեան“ ուսումնարանի վարչութիւնը յայտնում է, թէ նոյն դպրոցումը նշանակված է ամուրդ նոյեմբերի 22-ին առաւօտեան 10 ժամին, նոյն եկեղեցապատկան 12 № կրպակները և սենեակները կապալաւ տալու համար։

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ քան թէ ուրիշ տեղ. ԹԷՑ, կակաո, ՇՕԿՕԼԱԴ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բօկալներ, թէյամաններ, սուրգոկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուանալու ամաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԶԳԵՍՏԱԿԱԽՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻԶՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, մէջքակապներ, կլէօնկա, ԹԱՄՔԵՐ, սանձեր, ուլթօներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, երեսբրիչներ, թաշկինակներ, կանանց գուլբաներ, մարդկերանց գուլբաներ, տուալետի սապոն, հոտաւէտ ջրեր, շերբետ, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կօնիակ և 1,000 այլ առարկաներ։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։ ՆՈՅՆ ՏԵՂԸ** վաճառականներին **ՄԵԾ** քանակութեամբ ծախվում է **ԹԷՑ**. պուդերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր թէյը ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ։

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ՉՕԿ-ԲՕՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., րէվոլվերներ 4—34 ր., ԲՈՒԼԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50 կ. դիւժինը, ալբոմներ կիսագնով, ֆիլտրաներ և այլն։ Ամենամեծ պահեստ հրացանների և րէվոլվերների Թիֆլիսում։

48—100

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը Թիֆլիսի քաղաքային բժշկանոցում լինում է 9—1 ժամը։

Ամենայն օր Թիֆլիսի քաղաքային բժշկանոցում ընդունում են հիւանդներին հեռաւոր բժիշկները.

Հելդիշ 9—10 ժամը խիրուրգիական, սիֆիլիտիկական և կաշու հիւանդութիւնների։ Դանիելբէկով և Լիսիցով 10—11 ժամը ներքին և ջղային հիւանդութիւնների։ Գավրօնսկի 11—12 ժամը մանկաբարձական և կանանց հիւանդութիւնների։ Կուդէինովիչ 12—1 ժամը սիֆիլիտիկական և ներքին հիւանդութիւնների։ Բացի այդ Գօրալեվիչ երկուշաբթի օրերը ներքին հիւանդութիւնների։ Մինկեվիչ երեքշաբթի և ուրբաթ օրերը 9—10 խիրուրգիական հիւանդութիւնների։ Վերմիշեվ երեքշաբթի և ուրբաթ օրերը 10—11 ժամը ներքին հիւանդութիւնների։ Բէյլ երեքշաբթի և շաբաթ 10—11 ժամը աչքերի հիւանդութիւնների։ Բաբայեվ երեքշաբթի և շաբաթ 12—1 ժամը ջղային և ներքին հիւանդութիւնների։ Քիւչարեանց 1-ն չորեքշաբթի օրերը 11—12 ժամը խիրուրգիական, ականջի և բգային հիւանդութիւնների և շաբաթ օրերը սիֆիլիսի միջային-սեռական օրգանների հիւանդութիւնների։ Տարխանով երկուշաբթի, չորեքշաբթի և շաբաթ 11—12 ժամը ներքին հիւանդութիւնների։ Կին-բժիշկ Որիբուլ երկուշաբթի և հինգշաբթի 12—1 ժամը կանանց հիւանդութիւնների։

Օբրեխտ ատամի ցաւ ունեցողներին ընդունում է իր տանը ամեն ժամանակ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով։ Ամեն օր բացի կիրակիից բժշկանոցի մէջ լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար։ Բժշկանոցի դիրեկտոր։

Դ. Լիսիցով

ՐԷՍՏՕՐԱՆԸ
ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆԻ ՄՕՏ

Մի նոր տիրոջ ձեռքն անցնելով, ստացել է այժմ մի բոլորովին այլ և գեղեցիկ տեսք, ունի ընտիր ՃԱՇԵՐ և ԸՆԹՐԻՔՆԵՐ, նոյնպէս և լաւ ԽՄԻՋՔՆԵՐ։ Գները շատ էժան են

12—20

ԹԷՑ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ թէյ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՖԼԻՍՈՒՄ**, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական **ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ**։ Բացի այդ Անգլիական խանութը կշռում է **ՄԱՔՈՒՐ** թէյ առանց **ԹՂԹԻ** և **ԱՐՃԱՃԻ**։

83—100

ՀԱՑՈՑ ԼԵԶՈՒԻ, ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ դասեր ընտանիքներում։ ՀԱՐՑՆԵԼ „**ՄԸՇԱԿԻ**“ խմբագրութեան մէջ։

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 խրուստալի բաժակներ 25 կ. հատը, 10,000 բօկալ և բաժակներ 10 կ. հատը, 10,000 մատուցարաններ և կողպէքներ 15 կ. հատը, 10,000 սասեղ 8—40 կ. հարիւրը, 10,000 պենալներ 5 կ., 5,000 շիշ պօրտ-վէյն և խերես 1 ր. հատը, 2,000 արշին կլէօնկա 60 կ.—2 ր. արշինը, 2,000 դիւժին մատիտներ և զրչակոթեր 8 կ. դիւժինը, 2,000 ֆ. հնդկական բրինձ 7, 8 և 10 կ. ֆունտը, 1000 ֆունտ լէպէշկա 50 կ. ֆունտը, 600 անգլիական բէվոլվերներ 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, դրապ, տրիկօ, ալբոմներ, ձմեռվայ պալտոներ, գլխարկներ, վարտիկներ, հագուստ կէս գնով։ Ծախվում է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ։ Նոյն տեղը ծախվում է ծովային **ԽՈՏ** պուդը 2 ր. 50 կ.։

4—60

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ
ԹՈՒՄԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ

Սիստեմատիքական ընթացք հայոց միջնակարգ ուսումնարանների համար։ Մասն առաջին (ամբողջ թուեր) ԳՐԻԳՈՐ ՎԱՐԶԵԼԵԱՆ, հրատարակութիւն Բ. **ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ** լրագրական գործակալութեան

ԳԻՆՆԷ 40 ԿՈՊ.

Վաճառվում է բացառապէս Թիֆլիսում՝ **Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ**։

Ուսումնարանները և գումարով առնողները ստանում են 20% զիջումն։

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն հեռաւեալ հասցէով. Въ Тифлисъ, газетное Агентство Шавердова.

3—10

ՎԻԻՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կատոլիկաց փողոցի անկիւնում Մի-ՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

103—150

ОТКРЫТА ПОДПИСКА
на **1882** годъ
НА БОЛЬШУЮ ЕЖЕДНЕВНУЮ, ПОЛИТИЧЕСКУЮ, ОБЩЕСТВЕННУЮ И ЛИТЕРАТУРНУЮ ГАЗЕТУ
„РУССКІЙ КУРЬЕРЪ“
ГОДЪ ТРЕТІЙ.

УСЛОВІЯ ПОДПИСКИ:

Съ доставкою въ москвѣ:			Съ пересылкою въ города:		
На 12 мѣс. 8 р. 50 к.	На 6 мѣс. 4 р. 50 к.		На 12 мѣс. 9 р. —к.	На 6 мѣс. 5 р. — к.	
» 11 » 8 » — »	» 5 » 3 » 90 »		» 11 » 8 » 50 »	» 5 » 4 » 60 »	
» 10 » 7 » 50 »	» 4 » 3 » 25 »		» 10 » 8 » — »	» 4 » 3 » 70 »	
» 9 » 6 » 75 »	» 3 » 2 » 50 »		» 9 » 7 » 40 »	» 3 » 2 » 75 »	
» 8 » 6 » — »	» 2 » 1 » 90 »		» 8 » 6 » 70 »	» 2 » 2 » — »	
» 7 » 5 » 25 »	» 1 » 1 » — »		» 7 » 5 » 90 »	» 1 » 1 » 10 »	

За границу: на 12 м. 17 р., на 6 м. 9 р., на 3 м. 5 р., на 1 м. 2 р.

Подписка принимается въ конторѣ изданія: Москва, Москворѣцкій мостъ, д. Н. П. Ланина, въ отдѣленіи конторы—близъ Петровки, Столешниковъ пер., д. Карзинкина, въ извѣстныхъ книжныхъ магазинахъ Москвы и С.-Петербурга и въ Парижѣ—Rue Clément, 4, Adam.

Гг. иногородные благоволятъ адресоваться преимущественно въ контору изданія „**РУССКІЙ КУРЬЕРЪ**“

1—3

Дозволено цензурою, Тифлисъ 12 Ноября 1881 года. Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго